

«ԼԳԲՏԻՔ+ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Իրավունքի կողմ
իրավապաշտպան ՀԿ

*Սույն հետազոտությունը մշակվել է «Իրավունքի կողմ»
իրավապաշտպան ՀԿ-ի կողմից Տեղական
նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI)
ֆինանսական աջակցությամբ:*

*Սույնի բովանդակությունը և արտահայտված տեսակետները
պատկանում են «Իրավունքի կողմ»
իրավապաշտպան հասարակական կազմակերպությանը և կարող են
չհամընկնել Տեղական
նախաձեռնությունների կանադական հիմնադրամի (CFLI)
տեսակետների հետ:*

*Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի բոլոր մարզերում
բնակվող 400 ԼԳԲՏԻՔ+ անձանց շրջանում, արձանագրվել են մարդու
իրավունքների խախտման դեպքեր 2021-2022 թվականների
ընթացքում:*

*Բովանդակային նախազգուշացում. գեկույցը ներառում է բռնության
և դաժանության տեսարանների նկարագրություններ և խորհուրդ չի
տրվում կարդալ այն մարդկանց, ովքեր զգայուն են նման
տեղեկատվության հանդեպ:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	3
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
1.1. Մեթոդաբանություն, նմուշառում և թիրախավորում, գործիքներ, գաղտնիություն և անանունություն.....	6
1.2 Սահմանափակումներ	8
1.3 Գաղտնիություն և անանունություն	8
2. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՅԱՅՈՒՄՆԵՐԸ	9
3. ԼԳԲՏԻԶ+ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՈՂՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԶԵՐ	10
Ատելության հիմքով հանցագործությունների իրավական իրավիճակը.....	10
4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ.....	15
ԲԱՌԱՐԱՆ	16
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	18

ՆԱԽԱԲԱՆ

Ի տարբերություն շատ երկրների, Հայաստանը չունի առանձին վիճակագրություն ԼԳԲՏԻԶ+ անձանց նկատմամբ ատելության խոսքի, ատելության հիմքով հանցագործությունների և խտրականության դեպքերի վերաբերյալ և հատուկ միջոցներ չի ձեռնարկում դրանց կանխարգելման համար: Ընդհակառակը, հայկական բյուրոկրատական մշակույթն ավելի հաճախ ենթադրում է իդեալական իրավիճակի ձևական ներկայացում, երբ ցանակալի է տարբեր տեսակի խնդիրների բացակայությունը, իսկ դրանց առկայությունը, ընդհակառակը, միայն խանգարում է, ոստիկանության կամ նույնիսկ ամբողջ երկրի բացասական իմիջն է ստեղծում:

Ցավոք, ՀՀ իրավապահ մարմինները տեղեկատվություն չեն հավաքում ատելության հիմքով հանցագործությունների մասին, հատկապես, երբ խոսքը գնում է ԼԳԲՏԻԶ+ անձանց դեմ ուղղված իրավախախտումներին: Այս իրավիճակում մեր կազմակերպությունը փորձում է լրացնել բացը՝ հասարակության բոլոր շերտերում բարձրաձայնելով համայնքի առջև ծառայած խնդիրների մասին և փոփոխությունների համար ջատագովություն իրականացնելով: «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն էական դեր է խաղում ԼԳԲՏԻԶ+ անձանց իրավունքների և շահերի պաշտպանության գործում՝ փորձելով երկխոսություն զարգացնել համապատասխան մարմինների հետ՝ խթանելու ներառական օրենքների ու քաղաքականությունների ընդունումը, համագործակցելով կազմակերպությունների հետ, որոնք կենտրոնանում են գենդերային ինքնությամբ պայմանավորված բռնությունների վրա՝ համատեղ ուժերով բարձրացնելով իրազեկվածության մակարդակը ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, որն էլ նպաստում է համայնքի անվտանգությանն ու բարեկեցությանը:

Մենք՝ որպես համայնքահեն և համայնքի կողմից ղեկավարվող կազմակերպություն, կարծում ենք, որ այս հետազոտությունը կօգնի մեզ հասնել ներառական հասարակության ձևավորման մեր տեսլականին, հասարակության, որը հարգում է գենդերային բազմազանությունը, միջավայրի, որտեղ տրանս անձինք հավասար են և ապրում են ապահով, առողջ, հավասարապես ներգրավված են կյանքի բոլոր ոլորտներում՝ առանց որևէ տեսակի խտրականության:

«Իրաբունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ նախագահ,
Լիլիթ Մարտիրոսյան

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ատելության հիմքով հանցագործությունները համեմատաբար նոր հասկացություն են քրեագիտության, ակտիվիզմի, քաղաքականության մեջ և առօրյա կյանքում: Չնայած այն հանգամանքին, որ նման հանցագործությունները գոյություն են ունեցել դարեր շարունակ, օրինակ՝ նացիստական Գերմանիայում կամ Կու Կուքս Կլանի կողմնակիցների կողմից ԱՄՆ-ում կատարված հանցագործությունները մարդկանց որոշակի խմբերի դեմ, սակայն հանցագործությունները հատուկ ճանաչման են արժանացել քրեական օրենսդրությամբ միայն քսաներորդ դարի վերջում:

Սա արտացոլում է սոցիալական տարբերությունների նկատմամբ զգայունության բարձրացման ընդհանուր միտումները, բազմազանության արժեքի ըմբռնումը և, ի վերջո, մարդասիրության համընդհանուր սահմանումը, որն աստիճանաբար ընդունվում է օրենքով: Աստիճանաբար ավելի շատ մարդիկ են սկսում մտածել, որ անհրաժեշտ է մարդկանց տարբեր խմբերին հավասարապես հարգել, ընդունել, աջակցել և պաշտպանել:

Ատելության հիմքով հանցագործությունների ոլորտում առկա օրենսդրության նպատակն է պաշտպանել նրանց, ովքեր ժամանակակից հասարակությունում ոչ արտոնյալ դիրք են զբաղեցնում և, հետևաբար, հաճախ դառնում են հանցագործների բացասական վերաբերմունքով հրահրված, չարդարացված բռնության կամ այլ անցանկալի արձագանքի առարկա:

Ատելության հիմքով հանցագործությունները դատապարտվում են բազմաթիվ երկրների կողմից: ԱՄՆ-ում գործում է դաշնային օրենսդրություն, ինչպես նաև օրենքներ, որոնք սահմանում են ատելության հիմքով հանցագործությունները և կանխարգելիչ միջոցներ են ձեռնարկում նման հանցագործությունների համար: Կա նաև ոստիկանության կողմից ներկայացվող հաշվետվության վիճակագրական ձև: Եվրոպայում ԵԱՀԿ-ն աշխատում է ատելության հիմքով հանցագործությունների վրա: Մասնավորապես, Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը մշտադիտարկման է ենթարկում ատելության հիմքով հանցագործությունները, առաջարկություններ և քաղաքականություն է մշակում այս ոլորտում: Հայաստանը ԵԱՀԿ-ի մասնակից երկիր է:

2003թ. դեկտեմբերին Մասսոբիխտում տեղի ունեցած Նախարարների խորհրդի նիստում ԵԱՀԿ մասնակից պետությունները միասնաբար ճանաչեցին ատելության հիմքով հանցագործություններից բխող վտանգները և իրենց ուսերին վերցրեցին նման հանցագործությունների դեմ պայքարելու խնդիրը: Այնուհետև ԵԱՀԿ մասնակից պետությունները մի շարք որոշումներ ընդունեցին, որոնք ԺՀՄԻԳ-ին պարտավորեցնում էին քայլեր ձեռնարկել ատելության հիմքով հանցագործությունները կանխելու համար: Մասնակից պետությունները պարտավորվեցին «քննարկել նոր օրենսդրություն ընդունելու կամ առկա օրենսդրությունն ուժեղացնելու հանգամանքը, որը կկանխի գեղեղային հիմքով պայմանավորված խտրականությունը կամ ատելության հիմքով հանցագործությունների դրդումը...»¹:

¹ Տե՛ս՝ OSCE Permanent Council Decision No. 621, "Tolerance and the Fight Against Racism, Xenophobia and
4

Հայաստանում ԼԳԲՏԻԶ+ համայնքի իրավիճակի վերաբերյալ տվյալները չափազանց սահմանափակ են, չկա տվյալների հավաքագրման մեխանիզմ, որը հնարավորություն կտար հետևողականորեն և բարձր պրոֆեսիոնալիզմով փաստաթղթավորել աստելության հիմքով հանցագործության դեպքերը՝ բարձրացնելով ԼԳԲՏԻԶ+ անձանց տեսանելիությունը ոչ միայն հասարակության մեջ, այլ նաև քաղաքացիական հասարակության շրջանում: ԼԳԲՏԻԶ+ անձանց իրավունքների խախտման դեպքերը ներառված չեն մարդու իրավունքների վերաբերյալ ազգային և միջազգային զեկույցներում, որոնք մշակվում և ներկայացվում են իրավապաշտպան կազմակերպությունների կամ պետական մարմինների կողմից: Հետևաբար, սույն հետազոտությունը լրացնում է այդ բացը, այն ապացույցների վրա հիմնված զեկույց է՝ Հայաստանում ԼԳԲՏԻԶ+ անձանց նկատմամբ աստելության հիմքով տեղի ունեցած հանցագործությունների վերաբերյալ:

«ԼԳԲՏԻԶ+ անձանց իրավունքների խախտման դեպքերը Հայաստանում» հետազոտությունը ներառում է 2021 թվականի հուլիսից մինչև 2022 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածի դեպքերը: Հետազոտության նպատակն է խթանել ԼԳԲՏԻԶ+ անձանց իրավունքների պաշտպանությունը Հայաստանում փաստերի հավաքագրման և ապացույցների վրա հիմնված ջատագովության միջոցով: 400 ԼԳԲՏԻԶ+ անձանց շրջանում իրականացված հետազոտությունը բացառապես կենտրոնացած է աստելության հիմքով հանցագործությունների, բռնության և խտրականության վրա, որոնց բախվել են ԼԳԲՏԻԶ+ անձինք 2021-2022 թվականներին: Հետազոտության արդյունքում մշակվել է Հայաստանում աստելության հիմքով հանցագործությունների փաստագրման և տվյալների հավաքագրման համապարփակ մեխանիզմ. յուրաքանչյուր դեպքի համար լրացվել է առանձին հարցաշար: Հավաքագրվել և վերլուծվել են միայն 2021 թվականի հուլիսից մինչև 2022 թվականի փետրվարն ընկած ժամանակահատվածի դեպքերը: Սույն զեկույցում ամփոփված տվյալները ներառում են 113 դեպք, որոնցից 78-ը ներկայացրել են տուժողները, իսկ 35-ը՝ վկաները: Հետազոտությունը ներկայացվել է համապատասխան մարմիններին հաղորդակցման արշավների կազմակերպման միջոցով, որի համար օգտագործվել են «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի սոցիալական ցանցերը և էլեկտրոնային հասցեները:

1.1. Մեթոդաբանություն, նմուշառում և թիրախավորում, գործիքներ, գաղտնիություն և անանունություն

1.1.1. Մեթոդաբանություն

Սույն հետազոտության շրջանակներում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն համագործակցել է ԼԳԲՏԻՔ+ համայնքի ներկայացուցիչների հետ, որոնք էլ հետագայում ապահովել են հետազոտության վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը և համայնքի մասնակցությունը հետազոտությանը: Կազմակերպության և ԼԳԲՏԻՔ+ համայնքի միջև կապն ապահովվել է աուրթիչ աշխատակցի միջոցով:

Դեպքերի մեծ մասը հավաքագրվել է տուժողների կամ վկաների հետ առերես հարցազրույցների միջոցով: Հարցումն իրականացվել է տարբեր մեթոդների կիրառմամբ.

1. «Ձնագնդի» մեթոդ - հարցմանը մասնակցող յուրաքանչյուր ոք կարող է հետազոտության մասին տեղեկացնել իր համայնքի անդամներին:
2. Հիմնական մարտահրավերները հաղթահարելու համար մենք ձգտել ենք կապ հաստատել մարզաբնակ ԼԳԲՏԻՔ+ առաջնորդների հետ, ինչպես նաև ԼԳԲՏԻՔ+ համայնքի անդամների հետ՝ այցելելով ակումբներ, բարեր, տներ, հավաքատեղիներ և սեքս աշխատանքի վայրեր՝ նույնիսկ գիշերային ժամերին:

1.1.2 Նմուշառում և թիրախավորում

Սույն հետազոտությունը ներառում է Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործությունները կամ ատելության հիմքով այլ իրավախախտումները: Յուրաքանչյուր դեպքի համար լրացվել է առանձին հարցաշար: Հավաքագրվել և հետազոտվել են միայն վերջին երկու տարվա ընթացքում (2021թ. հուլիս – 2022թ. փետրվար) տեղի ունեցած միջադեպերը: Հետազոտության թիրախներն են.

- ԼԳԲՏԻՔ+ անձինք, ովքեր ենթարկվել են ատելության հիմքով հանցագործության կամ ատելության հիմքով այլ իրավախախտումների:
- Ցանկացած գենդերային ինքնություն ունեցող անձինք, ովքեր ականատես են եղել Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձի/անձանց նկատմամբ ատելության հիմքով հանցագործության:

Հարցումն իրականացվել է միայն 16 տարին լրացած անձանց շրջանում:

Ընդհանուր առմամբ հավաքագրել ենք 113 դեպք, որոնցից 78-ը ներկայացվել են տուժողների կողմից, ովքեր ԼԳԲՏԻՔ+ համայնքի անդամներ են, իսկ 35-ը՝ ականատեսների կողմից:

1.1.3 Հետազոտության գործիքներ

- Անհատական հարցազրույցներ ստանդարտացված հարցաթերթիկի միջոցով կազմակերպության անվտանգ տարածքում:

- Անհատական հարցազրույցներ հեռախոսով ստանդարտացված հարցաթերթիկի միջոցով:

- Անհատական հարցազրույցներ ստանդարտացված հարցաթերթի լրացման միջոցով՝ հավաքատեղիներ, սեքս աշխատանքի վայրեր և ԼԳՏԻԶ+ անձանց տներ այցելելով:

Ստանդարտացված հարցաթերթի և առցանց հարցաշարի միջոցով դուրս են բերվել ինչպես որակական, այնպես էլ քանակական տվյալներ: Հետազոտությունը ներառում է նաև ՀՀ օրենսդրության և ատելության հիմքով հանցագործություններին առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի իրավական վերլուծություն:

1.2 Մահմանափակումներ

Չնայած համայնքահեն կազմակերպություն լինելուն, մեզ համար պարզ դարձավ, որ ԼԳԲՏԻՔ+ համայնքի շատ անդամներ դեռևս անհարմար են գգում կիսվել իրենց անձնական տվյալներով, նույնիսկ երբ վստահ են, որ հարցումն անանուն է իրականացվում: Ավելին, նրանք ամոթի և ինքնախարանի զգացում են ապրում՝ իրենց ինքնությամբ և/կամ միջադեպով պայմանավորված, որն էլ խանգարում է նրանց հաղորդել դեպքի մասին: Հարցազրույցների ընթացքում մենք նույնիսկ տեղեկացանք, որ համայնքի որոշ անդամներ կարծում են, որ դեպքի մասին բարձրաձայնելը «ոչինչ չի փոխի»: Հետազոտության ընթացքում բախվել ենք նաև ժողովրդագրական հիմնախնդրին, քանի որ հարցաթերթիկը լրացրած անձանցից 97-ը 18-30 տարեկան էին: Վերջինս կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ԼԳԲՏԻՔ+ ակտիվիզմը Հայաստանում վերջերս է սկսել զարգանալ և երիտասարդները կարևոր դեր են խաղում այդ հարցում, իսկ մեծահասակները բավականաչափ ներգրավված չեն ակտիվիզմի մեջ և կազմակերպության աշխատանքներում: Հարցվածներից շատերը նշել են նաև, որ դեպքերի մեծ մասը տեղի է ունեցել մայրաքաղաք Երևանում, քանի որ Հայաստանի մարզերն ավելի պահպանողական են և ԼԳԲՏԻՔ+ անձինք շարունակ տեղափոխվում են մայրաքաղաք:

1.3 Գաղտնիություն և անանունություն

Հետազոտական թիմն ապահովում է հարցման մասնակիցների և նրանց տվյալների անանունությունը և տեղեկատվության արխիվացման և պահպանման անվտանգությունը, և միայն հետազոտական թիմը կարող է նույնականացնել անհատների պատասխանները: Մենք ունենք որդեգրած քաղաքականություն՝ որի շնորհիվ կանխվում է հետազոտությունից դուրս անհատներին իրենց պատասխանների շնորհիվ նույնականացնելու վարկածը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի համար կարևոր է անել հնարավորինը՝ ապահովելու տվյալների գաղտնիությունը:

- Լրացված հարցաթերթում մենք օգտագործում ենք հատուկ ծածկագրեր:
- Հավաքագրված տեղեկատվությունը պահվում է առանձին վայրում և միայն հետազոտական թիմին է հասանելի:
- Հետազոտության մասնակիցներից ստացված անձնական տվյալները ջնջվել են առցանց համակարգերից:

Հետազոտության մասնակիցներից հավաքագրված տեղեկատվության գաղտնիության ապահովումը նշանակում է, որ անհատների նույնականացման տվյալները (օրինակ՝ անուն, հասցե, էլ. փոստ և այլն) չեն հավաքագրվելու և հետազոտության արդյունքում տրամադրված անհատական պատասխանների միջոցով մասնակիցների ինքնությունը հնարավոր չի լինելու պարզել: Հետազոտության մասնակիցների անձնական տվյալները չպետք է հավաքագրվեն, եթե դրանք կարևոր չեն դեպքի ուսումնասիրության համար:

2. ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Դեպքերի մեծամասնությունը (64%) տեղի է ունեցել մայրաքաղաք Երևանում, արձանագրված դեպքերի 23%-ը տեղի են ունեցել ԼԳԲՏԻԶ+ անձանց հավաքատեղիներում, դեպքերի 13%-ը՝ այլ հասարակական վայրերում: Կարևոր է նշել, որ 3 միջադեպ տեղի է ունեցել պետական կառույցներում, 1-ը՝ սահմանային անցակետում, իսկ 7-ը՝ ոստիկանության բաժիններում:

Դեպքերի մեծ մասը՝ 79%-ը, տեղի են ունեցել 18-30 տարեկան տրանս երիտասարդների հետ, թեև գրանցվել են դեպքեր նաև տարբեր տարիքային խմբերի շրջանում՝ 16 տուժածներ եղել են 31-41 տարեկան, 5 տուժածներ՝ 41-61 տարեկան, և միայն 3 հոգի են եղել 61 տարեկանից բարձր: Ամենատարիքային հարցվողը 18 տարեկան է եղել, ամենատարեցը՝ 64: Տուժածների մեծամասնությունը՝ 76 հոգի նույնականացվել են որպես տրանսգենդեր անձ: Հարցվածների մեծ մասն իր սեռական կողմնորոշվածությունը նշել է որպես հետերոսեքսուալ: Բոլոր հարցվածներն ինչ-որ չափով «բացահայտ» ԼԳԲՏԻԶ+ անձինք են եղել, բացառությամբ 8 վկաների, որոնք նշել են, որ ԼԳԲՏԻԶ+ համայնքին անդամներ չեն:

Արձանագրված դեպքերի 56%-ը տեղի է ունեցել գիշերը, իսկ 18%-ը՝ երեկոյան, դեպքերի 15%-ը՝ առավոտյան, իսկ 11%-ը՝ ցերեկը:

Դեպքերի մեծ մասը (41%) եղել է բռնության սպառնալիք, 34%-ը՝ վիրավորանք կամ բանավոր չարաշահում, 11%-ը՝ ֆիզիկական բռնություն: Արձանագրված դեպքերի կեսից ավելին կատարվել են 1 հանցագործի կողմից, 24-ը՝ 2 հանցագործ, և 15-ը՝ հանցագործների խմբի կողմից (ավելի քան 3 հոգի): Այն հանգամանքը, որ հանցագործը նրանց ճանաչել է որպես ԼԳԲՏԻԶ+ անձ, նշվել է 63%-ի կողմից: Դեպքերի 84%-ը ներկայացվել է ԼԳԲՏԻԶ+ անձանց իրավունքները պաշտպանող ՀԿ-ներին, 2-ը՝ Գլխավոր դատախազություն, քանի որ տուժողներին չի գոհացրել ոստիկանության որոշումը: Արձանագրված դեպքերից և ոչ մեկը չի դիտարկվել որպես ատելության հիմքով հանցագործություն, քանի որ Հայաստանի գործող օրենսդրությունը չի ճանաչում սեռական կողմնորոշվածությունը կամ գենդերային ինքնությունը որպես հանցագործության ծանրացուցիչ հանգամանք: Այսպիսով, ոստիկանությունը և այլ իրավապահ մարմինները տրանսֆոր և հոմոֆոր բռնությունը դասակարգում են որպես սովորական հանցագործություն կամ վարչական իրավախախտում: Տուժածների մեծամասնությունը դիմել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ՝ իրավաբանական աջակցություն և խորհրդատվություն ստանալու համար:

3. ԼԳԲՏԻՔ+ ԱՆՁԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐՈՎ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՐԵՐ

Ատելության հիմքով հանցագործությունների իրավական իրավիճակը

«Ատելության հիմքով հանցագործություն» հասկացությունը դժվար չէ հասկանալ, բառակապակցությունն արդեն իսկ խոսում է իր մասին: Ահա թե ինչու պետական մարմինները, լրատվամիջոցները, քաղաքացիները, ակտիվիստները և այս հայեցակարգի շուրջ քննարկումներին մասնակցած ցանկացած այլ անձ հեշտությամբ կարող է հասկանալ այս հայեցակարգը: Ենթադրվում է, որ ժամանակակից հասարակությունը պետք է բացասական վերաբերմունք ունենար օրենքի խախտման նկատմամբ, հատկապես երբ խոսքը վերաբերում է քրեական հանցագործությանը: Մարդկանց ծեծելը, սպանելը կամ գողություն անելը հանրության կողմից մեծամասամբ անընդունելի է համարվում, թեև ոչ բոլորն են հետևում այս սկզբունքին:

Ըստ ԺՀՄԻԳ-ի, ատելության հիմքով հանցագործությունները հանցավոր արարքներ են, որոնք կատարվել են կանխակալ շարժառիթներով: Այս շարժառիթը տարբերակում է ատելության հիմքով հանցագործությունները մյուս հանցագործություններից: Ատելության հիմքով հանցագործությունը կոնկրետ մեկ հանցագործություն չէ: Այն կարող է կրել ահաբեկչական բնույթ, կարող է լինել սպառնալիքի, գույքային վնասի, հարձակման, սպանության կամ քրեական այլ հանցագործության տեսքով: Հետևաբար, «ատելության հիմքով հանցագործություն» կամ «կողմնակալ հանցագործություն» տերմինը նկարագրում է հանցագործության տեսակը, այլ ոչ թե քրեական օրենսգրքում ամրագրված որոշակի հանցագործություն: Անձը կարող է ատելության հիմքով հանցագործություն կատարել մի երկրում, որտեղ չկա հատուկ քրեական պատժամիջոց՝ կողմնակալության կամ նախապաշարմունքի պատճառով: Տերմինը բնութագրվում է որպես հայեցակարգ, այն իրավական սահմանում չէ:

Ատելության հիմքով հանցագործությունները միշտ ներառում են երկու տարրեր՝ **կողմնակալ շարժառիթով** կատարված **քրեական հանցագործություն**:

Քրեական հանցագործությունը քրեական օրենսդրության համաձայն հանցագործություն համարվող արարքն է: Ատելության հիմքով հանցագործությունների դեպքում միշտ պահանջվում է, որ ծանր հանցանք տեղի ունեցած լինի: **Եթե չկա հանցանք, ապա չկա ատելության հիմքով հանցագործություն**:

Կողմնակալության շարժառիթը տարբերում է ատելության հանցագործությունները սովորական հանցագործություններից: Սա նշանակում է, որ հանցագործը դիտավորյալ է ընտրում հանցագործության թիրախը որոշ պաշտպանված հատկանիշի պատճառով:

- Թիրախը կարող է լինել մեկ կամ մեկից ավելի հոգի, կամ կարող է լինել ընդհանուր հատկանիշներ ունեցող խմբի ունեցվածք:
- Պաշտպանված հատկանիշը այն հատկանիշն է, որը բնորոշ է որոշակի խմբի, ինչպես օրինակ՝ ռասան, լեզուն, կրոնը, էթնիկ պատկանելությունը,

ազգությունը կամ որևէ այլ նմանատիպ ընդհանուր հատկանիշ²:

ՀՀ Սահմանադրություն

Հոդված 29. Խտրականության արգելքը

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Հոդված 30. Կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը

Կանայք և տղամարդիկ իրավահավասար են:

29-րդ հոդվածը սահմանում է նաև խտրականությունը բացառող հիմքերի կամ հատկանիշների բաց ցանկը («անձնական կամ սոցիալական հանգամանքներ»), որտեղ նշվում է խտրականության բացառումը ցանկացած հատկանիշի դեպքում, ուստի, պետք է ներառի նաև գենդերային ինքնությունը և/կամ արտահայտումը: Այնուամենայնիվ, Հայաստանը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 12-րդ Արձանագրությունը, որի 1-ին հոդվածը սահմանում է խտրականության ընդհանուր արգելքը: Նշված արձանագրությամբ Եվրոպական կոնվենցիան ներառվում է ազգային իրավական համակարգում և կիրառվում է ներպետական պրակտիկայում:

Հոդված 77. Հիմնական իրավունքների և ազատությունների չարաշահման արգելքը

Արգելվում է հիմնական իրավունքների և ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով:

ՀՀ Օրենսդրություն

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով ռասիզմը սահմանվում է որպես կոնկրետ հանցագործություն, և որպես այլ հանցագործությունների որակական չափանիշ: **143-րդ հոդվածը** քրեական պատասխանատվություն է սահմանում մարդու իրավունքների և ազատությունների ուղղակի կամ անուղղակի խախտման համար, եթե դրանք հիմնված են եղել մի շարք հատկանիշների վրա, որոնք պաշտպանված են խտրականության արգելքով, ներառյալ ռասան, մաշկի գույնը, էթնիկական ծագումը, ազգային փոքրամասնության պատկանելությունը, և այլն: Նույն հանցագործությունը, եթե

² Տե՛ս՝ Ատելության հիմքով հանցագործության մասին օրենքներ, գործնական ուղեցույց, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ), Վարշավա, Լեհաստան, էջ 16-18:

կատարվել է պետական ծառայողի կողմից և պաշտոնական դիրքի չարաշահմամբ, ենթադրում է պատժի խստացում: **226-րդ հոդվածը** ենթադրում է քրեական պատասխանատվություն ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն հրահրելու, ինչպես նաև ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունների համար: Եթե նույն արարքները կատարվել են հրապարակայնորեն կամ զանգվածային լրատվության միջոցներով, բռնությամբ կամ բռնության սպառնալիքով կամ պաշտոնական դիրքի չարաշահմամբ, ինչպես նաև կազմակերպված խմբի կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ՝ 3-6 տարի ժամկետով: **392-րդ հոդվածը** ենթադրում է ազատազրկում 10-20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում **տեղահանության, ապօրինի ձերբակալության, ստրկացման, զանգվածային և կանոնավոր մահապատժի համար՝** առանց դատավարության, առևանգման, որին հաջորդում է **անհետացումը, խոշտանգումը կամ դաժան վերաբերմունքը քաղաքացիական անձանց նկատմամբ,** որոնք կատարվել են ռասայական, ազգային, էթնիկական ինքնության, քաղաքական հայացքների և կրոնի հողի վրա:

Քրեական դատավարության օրենսգրքի 16-րդ հոդվածը սահմանում է, որ օրենքով սահմանված բոլոր ընթացակարգերը պետք է միասնական լինեն քրեական դատավարության մեջ ներգրավված բոլոր անձանց համար՝ անկախ ռասայից, մաշկի գույնից, էթնիկական և **սոցիալական ծագումից** և խտրականության արգելքով պաշտպանված այլ առանձնահատկություններից:

Ատելության հիմքով հանցագործության մասին ՀՀ օրենքները բաղկացած են պատիժների ուժեղացման ընդհանուր և հատուկ դրույթներից, սակայն չեն ներառում գենդերային ինքնության և/կամ արտահայտման հիմքերը:

Ատելության հիմքով հանցագործություններ և ատելության դեպքեր

Հարցվողների հիմնական բնութագրիչներ

Հարցվածների մեծ մասն իրենց համարել է ԼԳԲՏԻՔ+ համայնքի անդամ: Բոլոր հարցվողներն իրենց կյանքում ինչ-որ չափով «բաց դեմքեր» են եղել, բացառությամբ 8 վկաների, ովքեր ասել են, որ իրենք ԼԳԲՏԻՔ+ համայնքին չեն պատկանում:

Հարցվածների գրեթե կեսն իրենց համարել են հետերոսեքսուալ, սակայն հարցվածներից 49-ը եղել են գեյ տղամարդ, 42-ը՝ լեսբի կին, 127-ը՝ բիսեքսուալ և միայն 7 հոգին են իրենց ասեքսուալ համարել:

400 հարցվածներից 271-ը պատկանել են 18-30 տարիքային խմբին, 97-ը՝ 31-41, 23-ը՝ 41-61, իսկ 9 հոգի պատկանել են 61-ից բարձր տարիքային խմբին: Ամենաերիտասարդ հարցվողը եղել է 18 տարեկան, ամենատարեցը՝ 64:

Հարցվածների մեծ մասը ներգրավված է եղել ԼԳԲՏԻՔ+ կազմակերպություններում՝

բացատրությամբ 11 հոգու:

Միջադեպեր

Ներկայացված միջադեպերի մեծ մասը տեղի է ունեցել գիշերը և երեկոյան ժամերին: Առավոտյան գրանցվել է ընդամենը 17 դեպք, ցերեկը՝ 12:

72 դեպք տեղի է ունեցել Երևանում, 38 դեպք տեղի է ունեցել ՀՀ այլ խոշոր քաղաքներում (Սևան, Կապան, Գյումրի և Վանաձոր), և միայն 3-ը՝ գյուղական վայրերում: Դեպքերից 26-ը տեղի են ունեցել հավաքատեղիներում, 15-ը՝ հասարակական վայրերում, 3-ը՝ պետական մարմիններում և 1-ը՝ սահմանային անցակետում, մնացած 68 դեպքը տեղի է ունեցել տանը, խանութներում, գեղեցկության սրահներում, սրճարաններում, ռեստորաններում և այլ վայրերում: Միջադեպերից և ոչ մեկը տեղի չի ունեցել աշխատավայրում, քանի որ գրեթե բոլոր հարցվածները նշել են, որ գործազուրկ են:

Սպանության, սպանության փորձի, սեռական ոտնձգությունների (առանց բռնության) դեպքեր չեն արձանագրվել: Դեպքերի մեծ մասը եղել են բռնության սպառնալիքներ, վիրավորանքներ, բանավոր չարաշահումներ և ֆիզիկական բռնություն:

Հանցագործներ և դրդասպաստնաներ

Արձանագրված դեպքերի կեսից ավելին կատարվել է մեկ հանցագործի կողմից, 24-ը՝ 2 հանցագործի, իսկ 15-ը՝ հանցագործների խմբի կողմից:

«Հարձակումների մեծ մասը եղել են իմ հաճախորդների կողմից, որոնք այցելել էին ինձ իմ ծառայություններից օգտվելու համար, բայց աեղյունքում իրենց ոչ ադեկվատ են պահել՝ հրաժարվելով վճարելուց, ինձ ստիպելով անել գործողություններ, որոնք չեմ ցանկանում, նվաստացնելով, ծաղրելով և ծեծելով ինձ: Նրանք հաճախ հարբած են եղել կամ էլ թմրանյութերի ազդեցության տակ: Այնուամենայնիվ, դեպքեր եմ հիշում, երբ տրանսֆոր մարդիկ, հաճախորդ ձևանալով, խմբերով հարձակվել են ինձ վրա՝ ծեծելու համար», – Տրանսգենդեր սեքս աշխատող Կ.Կ., 31 տարեկան, Երևան:

Հանցագործների մեծ մասը անհատներ են եղել: Հարցազրույցի մասնակիցները նշել են, որ հանցագործները եղել են թե՛ իրենց ծառայություններից օգտվող անձինք, թե՛ անծանոթ անցորդներ:

Հիմնականում դեպքերի շարժառիթը եղել են գենդերային ինքնությունը, գենդերային ինքնարտահայտումը և սեռական կողմնորոշվածությունը: Մա ևս մեկ անգամ ապացուցում է, որ դեպքերի շարժառիթը եղել է ինչպես տրանսֆորբիան, այնպես էլ հոմոֆորբիան և սեքս աշխատողների նկատմամբ ֆորբիան:

Այն հարցին, թե ինչու են մասնակիցները կարծում, որ միջադեպը պայմանավորված է եղել վերոնշյալ հատկանիշներից մեկով, 28 տուժող պատասխանել է, որ դա պարզ էր միջադեպի ընթացքում հանցագործների օգտագործած բառապաշարից, 31 անձ նշել է, որ միջադեպը տեղի է ունեցել իրենց գտնվելու վայրի պատճառով, «...բոլորը գիտեն, որ պլեշկայում (հավաքատեղի) գեյերի և տրանս անձանց կարելի է հանդիպել»: Այն փաստը, որ հանցագործը զոհերին նույնականացրել է որպես LGBTF+ անձ, նշվել է 71 հոգու կողմից: Մի տրանս կին

մեկնաբանել է. «նրանք ինձ ճանաչում էին, որովհետև մենք նախկինում ավելի քան 3 տարի նույն թաղամասում ենք ապրել, ինձ մի քանի անգամ տեսել էին, որ գիշերները դուրս եմ եկել փողոց»:

Միջադեպերի հետևանքները և հետագա գործողությունները

Բժշկական օգնության է դիմել միայն 18 տուժած, այն հարցին, թե ինչու, պատասխանել են՝ «չեմ վստահում բուժաշխատողներին», «բուժհաստատություններում վերաբերմունքը խտրական է», «չեմ ուզում, որ ոստիկանություն կանչեն, և ինձ տուգանեն, քանի որ սեքս աշխատանք եմ կատարում» և այլն:

Դեպքերն իսկապես հոգեբանական ազդեցություն են ունեցել տուժածների վրա: Հարցվածներն ասել են, որ միջադեպն ազդել է իրենց անձնական կամ սոցիալական կյանքի վրա: Տուժածներից շատերը հոգեբանական, սոցիալական և իրավական աջակցություն ստանալու համար դիմել են իրենց ընկերներին, զուգընկերներին, համայնքի անդամներին և համայնքահեն ՀԿ-ներին: Կային նաև տրանս սեքս աշխատողներ, ովքեր նշել են, որ աջակցությունը փնտրել են իրենց հաճախորդների շրջանում:

4. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼ ԻՐԱՎԱՊԱՀՊԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

Հայաստանում ԼԳԲՏԻԹ+ համայնքի ներկայացուցիչները կայուն հարաբերություններ չունեն ՀՀ ոստիկանության հետ, ի տարբերություն մյուս փոքրամասնությունների, և ոստիկանությունը ԼԳԲՏԻԹ+ գոհերի և իրավախախտների հետ աշխատելու շատ քիչ փորձ ունի: Թեև ստեղծության հիմքով հանցագործության մասին հաղորդում ներկայացնող ԼԳԲՏԻԹ+ անձանց թիվը ցածր է, հաղորդումները տարեցուտարի ավելանում են:

113 դեպքից ոստիկանություն է ներկայացվել միայն 27-ը, սակայն դրանցից ոչ մեկը չի դիտարկվել որպես ստեղծության հիմքով հանցագործություն:

Հարցին, թե ինչու հաղորդում չի ներկայացվել ոստիկանություն, հարցվածները պատասխանել են. «ես չեմ հավատում ոստիկանությանը», «նրանք ոչինչ չեն անի», «ես վախենում եմ նրանցից», «ես ինձ ապահով և պաշտպանված չեմ զգում ոստիկանությունում», «կարծում եմ՝ կզանգեն ծնողներին և կտեղեկացնեն իմ գենդերային ինքնության մասին» և այլն:

Ոստիկանության արձագանքի վերաբերյալ հարցին մասնակիցներից շատերն ասել են, որ ոստիկանությունը չեզոք է, միայն 4 տուժող է գտել, որ ոստիկանությունը աջակցում է համայնքին: Հարցվածներից 7-ին ոստիկանությունում ծաղրել են, մեկին վիրավորել, տուժողներից մեկն ասել է, որ ոստիկանության վերաբերմունքը «...կախված է ոստիկանության բաժանմունքից, եթե այն գտնվում է Երևանի կենտրոնում, այդտեղ ոստիկանները մեզ արդեն ճանաչում են և հաճախ են փորձում օգնել, բայց եթե դիմում ենք ծայրամասերի բաժանմունքներ, պետք է մոռանալ օգնության մասին»: Հաղորդված դեպքերից և ոչ մեկը դատարան չի ուղարկվել:

Դեպքերից 95-ը ներկայացվել են ԼԳԲՏԻԹ+ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ներին, 2-ը՝ Գլխավոր դատախազություն, քանի որ տուժողներին չի գոհացրել ոստիկանության որոշումը: Գործերը կարճվել են բավարար ապացույցների բացակայության պատճառով: ԼԳԲՏԻԹ+ համայնքի անդամների մոտ ոստիկանության նկատմամբ անվստահություն կա: Բացասական պատմությունները ոստիկանության հետ վատ համագործակցության, ոստիկանների ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ շատ են, որոնք էլ ոստիկանության նկատմամբ անվստահություն են առաջացնում:

ԼԳԲՏԻԹ+ համայնքը և իրավապաշտպան կազմակերպությունները դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու՝ ընդլայնելու համագործակցությունը ՀՀ ոստիկանության և համայնքի հետ՝ համայնքի կարիքները բավարարելու, ներառական, ուժեղ համայնք կառուցելու և Հայաստանում ստեղծության հիմքով հանցագործություններին վերջ տալու համար:

ԲԱՌԱՐԱՆ

Ասեքսուալ. սեռական կողմնորոշվածության կամ սեռականության որևէ դրսևորման բացակայությունն է:

Ատելություն հիմքով հանցագործություն. հանցագործություն, որը դրդված են ատելությամբ կամ մարդկանց որոշակի խմբի դեմ ուղղված կողմնակալությամբ: Մա կարող է հիմնված լինել սեռի, գենդերային ինքնության, սեռական կողմնորոշվածության, էթնիկ պատկանելության, կրոնի, տարիքի կամ հաշմանդամության վրա: Նաև կոչվում է կողմնակալ հանցագործություն:

Բացահայտ. բացահայտ գեյ, լեսբուհի, բիսեքսուալ, տրանս կամ ինտերսեքս լինել:

Բիսեքսուալ. անձի մշտական հուզական, զգայական, ժոմանտիկ և սեռական գրավչությունը դեպի նույն սեռի և հակառակ սեռի ներկայացուցիչների նկատմամբ: Բիսեքսուալ մարդիկ սեռական հաճույք են ստանում թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց հետ կենսակցելուց:

Գեյ. տղամարդ, ով սեռական և/կամ էմոցիոնալ գրավչություն ունի տղամարդկանց նկատմամբ: Գեյ տերմինը երբեմն օգտագործվում է նաև որպես ընդհանուր տերմին՝ լուսաբանելու լեսբուհի, բիսեքսուալ անձանց, ինչպես նաև գեյ տղամարդկանց: Այնուամենայնիվ, այս օգտագործումը վիճարկվել է LGBTF համայնքի մեծ մասի կողմից, և, հետևաբար, գեյը օգտագործվում է միայն այն դեպքում, երբ վերաբերում է տղամարդկանց, ովքեր զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունեն տղամարդկանց նկատմամբ:

Գենդեր. անձի ինքնությունն ու ինքնարտահայտումն է այնպիսի հասարակական դերերով, որոնք պատմա-աշխարհագրական, էթնիկ-մշակութային և սոցիալական նորմերի վրա հիմնված ավանդորեն տարանջատվում են արականի և իգականի: Այս տարանջատման հիմքում ընկած են հասարակության կողմից ընդունված անձի կարծրատիպային դերակատարումները: Սակայն, լինում են դեպքեր, երբ անձի սոցիալական սեռը չի համընկնում ոչ արական, ոչ էլ իգական սեռական դասակարգումների հետ: Սակայն, լինում են դեպքեր, երբ անձի սոցիալական սեռը չի համընկնում ոչ արական, ոչ էլ իգական սեռական դասակարգումների հետ: Մարդիկ, որոնք իրենց դասում են թե՛ արական, թե՛ իգական սեռերին, անվանվում են երկգենդերներ, իսկ նրանք, ովքեր իրենց չեն դասում ո՛չ արական, ո՛չ էլ իգական սոցիալական սեռին, անվանվում են ազենդերներ:

Գենդերային ինքնարտահայտում. անձի իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումն է. անձի գենդերային ինքնությունն արտահայտվում է իր պահելաձևով, նախասիրություններով, վարքագծով, արտաքին այլ դրսևորումներով, որոնք տվյալ հասարակությունը վերագրում է որպես արական կամ իգական:

Գենդերային ինքնություն. անձի սոցիալական արտահայտումն է հասարակությունում, ինչը կարող է չըհամընկնել նրա կենսաբանական սեռի հետ, սակայն հիմնված է արական և իգական երկակի հասկացությունների վրա:

ԵԱՀԿ. Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն, տարածաշրջանի անվտանգության խոշորագույն կազմակերպությունն է, որը ներառում է 57

պետություններ Եվրոպայից, Կենտրոնական Ասիայից և Հյուսիսային Ամերիկայից:

Ինտերսեքս. այն անձն է, որի սեռական վերարտադրողական օրգանները չեն համընկնում ավանդական արական և իգական հասկացողությունների հետ:

ԼԳԲՏԻՔ+. լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս, ինտերսեքս և քուիր անձանց հապավումը:

Խտրականություն. անձի իրավունքների և ազատությունների ցանկացած հիմքով տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն՝ առանց օբյեկտիվ հիմքերի և հետապնդվող իրավաչափ նպատակի ու ընտրված միջոցների միջև ողջամիտ համաչափության, որն ունի անձի իրավունքների և հիմնարար ազատությունների՝ հավասար հիմունքներով ճանաչումը, իրականացումը կամ դրանցից օգտվելը ոտնահարելու կամ սահմանափակելու նպատակ կամ ազդեցություն:

ՀՀ: Հայաստանի Հանրապետություն:

Հոմոֆոբիա. վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն և կամ ատելություն՝ ուղղված նույնասեռականությանը:

Հպարտության միջացառում. Հպարտության միջոցառումներն ու երթերը ամենամյա ցույցեր են (ընդդեմ հոմոֆոբիայի/տրանսֆոբիայի և հօգուտ ԼԳԲՏԻ իրավունքների), որոնք տեղի են ունենում ամբողջ աշխարհում:

Նույնասեռական/հոմոսեքսուալ. անձի մշտական հուզական, զգայական, ռոմանտիկ և սեռական կողմնորոշվածությունն է նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ: Նույնասեռականները սեռական հաճույք են ստանում նույն սեռի ներկայացուցիչների հետ սեքսով զբաղվելուց:

Սեռական կողմնորոշվածություն. անձի մշտական հուզական, զգայական, զգացմունքային և սեքսուալ հակումն է նույն սեռի ներկայացուցչի նկատմամբ: Նույնասեռականները սեռական բավականություն են ստանում իրենց իսկ սեռին պատկանող ներկայացուցիչների հետ կենսակցելուց:

Տրանս անձ/անձինք/տղամարդ/կին. ընդգրկում է համապարփակ տերմին է, որը վերաբերում է այն անձանց, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտությունը տարբերվում են նրա սեռի վրա հիմնված ավանդական գենդերային դերից:

Տրանսֆոբիա. վախ, ատելություն ու զգվանք տրանսգենդեր անձանց նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ատելության հիմքով հանցագործության մասին օրենքներ, գործնական ուղեցույց, ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ (ԺՀՄԻԳ), Վարշավա, Լեհաստան, էջ 16-18:
- Ատելության հիմքով հանցագործությունները Հայաստանի Հանրապետությունում, Արա Ղազարյան, Ստեփան Դանիելյան, «Համագործակցություն հանուն ժողովրդավարության» կենտրոն 28.06.2016թ., <http://www.v1.religions.am/eng/articles/hate-crimes-in-the-republic-of-armenia/>:
- Բառարան, ԻԼԳԱ-Եվրոպա, https://www.ilga-europe.org/sites/default/files/glossary_october_2015_edition.pdf:
- ԵԱՀԿ Մշտական խորհրդի «Հանդուրժողականությունը և պայքարը ռասիզմի, այլատյացության և խտրականության դեմ» թիվ 621 որոշում. <http://www.osce.org/pc/35610>:
- Հայաստանի Հանրապետության 1995 թվականի հուլիսի 5-ի Սահմանադրությունը՝ 2015 թվականի փոփոխություններով, <http://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=108723>:
- ՀՀ արդարադատության նախարարություն, <http://justice.am/legal/drafts>:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ

«Իրավունքի կողմ»-ը համայնքահեն, ժողովրդավար, իրավապաշտպան հասարակական կազմակերպություն (ՀԿ) է, որը հիմնադրվել է 2016թ. հունվարին տրանսգենդեր ակտիվիստների կողմից Հայաստանի Հանրապետությունում: Այն առաջին և առաջատար հասարակական կազմակերպությունն է Հայաստանում և Հարավային Կովկասում, որը կառավարվում է տրանսգենդեր համայնքի և սեքս աշխատողների կողմից՝ ի շահ տրանսգենդեր և սեքս աշխատող անձանց: ՀԿ-ի առաքելությունն է հասնել տրանսգենդեր անձանց և սեքս աշխատողների բարօրությանը, պաշտպանվածությանն ու հավասարությանը՝ առաջ քաշելով սոցիալ-մշակութային և իրավական փոփոխություններ՝ համագործակցելով պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և միջազգային կառույցների հետ:

Է. հասցե՝ [rightsiden@gmail.com](mailto:rightsidengo@gmail.com)

Կայք՝ <http://rightsiden.com/>

Հեռ.՝ +374 11 880770

